

# ն՞Վ Է ՀԱՅՐ...

*Posted on November 7, 2010 by Keghart*

**hetq**online

Category: [Opinions](#)





[Երվանդ Խոսրովյան](#), Եվրոպայի հայերի համագումար, 26 հոկտեմբեր 2010  
Վերջին օրերին նորից այն հին նվազն է նվազվում, թե ով է «հայը»: Գերմանիայի  
Համբուրգ քաղաքում մի խումբ Հայաստանի հայ երիտասարդներ Թուրքիայի հայ  
երիտասարդներին, անվանել էին «թուրք»՝ ասելով, թե նրանք հայերեն չեն խոսում:  
Նշենք, որ նրանք տարբեր համայնքներից հավաքվել էին Համբուրգ միմյանց հետ  
ֆուտբոլ խաղալու նպատակով, որտեղ էլ ինչ-ինչ պատճառներով գործը ծեծկռտուկի է  
հասնում ու վիրավորանքի:



[Երվանդ Խոսրովյան](#), Եվրոպայի հայերի համագումար, 26 հոկտեմբեր 2010  
Վերջին օրերին նորից այն հին նվազն է նվազվում, թե ով է «հայը»: Գերմանիայի  
Համբուրգ քաղաքում մի խումբ Հայաստանի հայ երիտասարդներ Թուրքիայի հայ  
երիտասարդներին, անվանել էին «թուրք»՝ ասելով, թե նրանք հայերեն չեն խոսում:  
Նշենք, որ նրանք տարբեր համայնքներից հավաքվել էին Համբուրգ միմյանց հետ  
ֆուտբոլ խաղալու նպատակով, որտեղ էլ ինչ-ինչ պատճառներով գործը ծեծկռտուկի է  
հասնում ու վիրավորանքի:



Այդ կապակցությամբ Գերմանիայում «armenienyahoogrup» ֆորումում որոշ մարդկանց  
կողմից ի հայտ եկան տարբեր կարծիքներ՝ մեծ մասամբ իրարամերժ: Յուրաքանչյուրը  
փորձում է ՀԱՅԻՆ բնորոշել ըստ իր տեսակետի:

Իրոք, ո՞վ է Հայը: Լոս Անջելեսի բանտերում 18 հազար քրեական գործով հայ  
կալանավորները, վերջին օրերին ձերբակալված հայկական հսկա մաֆիան՝ հայի  
ղեկավարությամբ, Արցախում հայկական պաշտպանության բանակում խաղաղ  
պայմաններում հայ զինվորին սպանողը, Հայաստանը թալանողը, միլիոնավոր  
արտագաղթի պատճառ հանդիսացողը, Ալիևին ԼՂ-ում ներդրումների առաջարկ  
անողը, ո՞վ:

Իհարկե, պարզ է, որ դրանք բոլորն էլ հայ են: Ինչո՞ւ մենք ռուսախոս, անգլիախոս, կամ  
գերմանախոս հայի հետ այդպես չենք վարվում: Ինչո՞ւ հենց Թուրքիայի հայի հետ ենք  
այդպես վերաբերվում: Եթե դա բխեր պատմական այն իրողությունից, որ թուրքերը  
հայերի հանդեպ ցեղասպանություն են գործել և դրա պատճառով էլ թուրքերեն լեզուն  
չպետք է գործածել, երևի թե ինչ-որ չափով այդ զգացմունքն ու մոտեցումը հասկանալի  
լիներ:

Բայց, ցավոք, դա այդ պես չէ: Այսինքն՝ ինդրին մոտեցման ձևն է սխալ: Հային  
բնորոշման սկզբունքն ու ձևը դրվում է ոչ թե նրա ազգային պատկանելիության  
ցանկության ու զգացումների, այլ նրա հայերեն խոսելու և չխոսելու, կամ, ինչպես  
շատերը շեշտում են, առաքելական եկեղեցուն պատկանելու և չպատկանելու հիման  
վրա՝ մոռանալով թեկուզ ասենք հենց միայն կաթոլիկ, կամ ավետարանական

Եկեղեցիներին դավանող հայերին:

Կամ, միթե՞ հենց այն հայախոս, առաքելական եկեղեցուն պատկանող հայի անհեռատեսությամբ ու թեթև ձեռքով փորձ չի արվում Հայաստանում վերացնել հայոց լեզուն՝ օտարալեզու դպրոցների բացման միջոցով: Նա էլ թուրք չէ, հայ է, բայց՝ հայի այդ տեսակը:

Ինչո՞ւ չենք ուզում ընդունել, որ մենք էլ պարզապես հասարակ ժողովուրդ ենք, ինչպես բոլորը: Ոչ մեկից ոչ ավել, ոչ էլ պակաս, պարզապես սովորական ժողովուրդ՝ իր թերություններով, յուրահատկություններով և լավ ու վատ կողմերով:

Ինչո՞ւ չենք կարողանում ընդունել ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, որ ՀԱՅ ասելով՝ նկատի ունենանք հենց այդ իրողությունն ու դառն ճշմարտությունը, ինչը գոյություն ունի և առկա է: Պետք է գիտակցենք, որ այդ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ փոխելու համար ոչ թե հայիոյանքն ու վիրավորանքն է աշխատող գործոնը, այլ իրար հասկանալու, օգնելու, սովորեցնելու ու սովորելու գործոնն է, որ կաշխատի:

Ազգի բնորոշումն ու ազգի հատկանիշները, իհարկե, տարբեր են անհատի ազգային պատկանելիության և նրա զգացումներից: Ազգն ունի հատուկ բնորոշում. պատմություն, լեզու, մշակույթ, կրոն և իհարկե իր հայրենի հողը, որի վրա նա բնակվում, ապրում, ստեղծում ու զարգացնում է իր մշակույթը, լեզուն, գիրն ու գրականությունը և այլն:

Իսկ այդ ազգի պատկանելիության զգացումն ունեցող անհատի հատկանիշները ազգի հատկանիշներին համապատասխանելիությունն իհարկե ցանկալի են, բաց ոչ պարտադիր: Անհատի կողմից տվյալ ազգի պատկանելիության զգացումն արդեն բավական է, որ նրան այդ ազգի անդամ, զավակ և այլն համարել:

Իսկ վիրավորելու և պիտակ կպցնելու փոխարեն պետք է հարգել նրա զգացումները, օգնել ու խրախուսել և սովորեցնել նրան, որ նա կարողանա իրեն այդ ազգի հատկանիշներին լիարժեք համապատասխանեցնել:

